

# Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը

## Աստվածաշնչի՝ Ջոզեֆ Սմիթի թարգմանության միջոցով Տերը վերականգնեց լրացուցիչ ուսմունքներ:

Կարո՞ղ եք գտնել Մովսեսի գիրքը ձեր սուրբ գրություններում: Ջոզեֆ Սմիթի թարգմանության միջոցով Տերը վերականգնեց լրացուցիչ գիտելիքներ, այդ թվում՝ Մովսեսի և ուրիշների տեսիլքներն ու ուսմունքները: Դրանք գտնվում են Մովսեսի Գրքում՝ Թանկագին Մարգարիտում:

Կարդացե՛ք Մովսես 1.3–4, 6, 8, 39 հատվածները: Գտե՛ք, թե ինչ սովորեց Մովսեսն իր և Տիրոջ մասին իր տեսիլքների ժամանակ: (Կարող եք նաև փնտրել սիրելի հատվածներ Մովսեսի Գրքում):

- Ինչպե՞ս կարող են այս հատվածների ուսմունքներն օգնել մեզ՝ Փրկչին հետևելու մեր ձգտման մեջ:
- Ինչո՞ւ մարդը կարող է երախտապարտ լինել այն ամենի համար, ինչ Տերը հայտնեց այս հատվածներում:

## Տերը վերականգնեց «պարզ ու արժեքավոր» ճշմարտությունները Ջոզեֆ Սմիթի թարգմանության միջոցով:

Երբևէ լսե՞լ եք, որ որոշ կարևոր ճշմարտություններ կարող են բացակայել կամ անհասկանալի լինել Աստվածաշնչում: Աստվածաշունչը վստահելի և ոգեշնչված գիրք է: Այնուամենայնիվ, Նեփիս ուսուցանեց, որ որոշ «պարզ ու արժեքավոր բաներ» բացակայում են կամ անհասկանալի են (1 Նեփի 13.28–29): Օրինակ, մկրտությունն ուղղակիորեն չի հիշատակվում Աստվածաշնչում՝ մինչև Նոր Կտակարանը, իսկ Նոյի մասին աստվածաշնչյան պատմությունը չի բացատրում, որ Տերը նախագգուշացրել էր մարդկանց և նրանց հնարավորություն էր տվել ապաշխարել՝ նախքան ջրհեղեղ ուղարկելը:

Կարդացե՛ք Մովսես 6.64–66, 8.16–17, 20 հատվածները և տեսե՛ք, թե ինչպես է Տերը վերականգնել արժեքավոր ճշմարտությունները Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ:

- Ինչպե՞ս է դա մեզ օգնում այսօր իմանալ, որ մկրտությունը պատվիրան էր դեռևս Ադամի օրերից:
- Ինչպե՞ս է դա մեզ օգնում իմանալ, որ Տերը միշտ առաջարկում է մեզ ապաշխարել և պատրաստ է ներել մեզ:
- Ինչպե՞ս են այս ճշմարտություններն առաջնորդում մեզ դեպի փրկություն Հիսուս Քրիստոսի միջոցով:

## Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ Տիրոջ հայտնությունները հանգեցրին հետագա հայտնությունների Վարդապետություն և Ուխտեր գրքում:

Սուրբ գրությունների ուսումնասիրությունը երբևէ օգնե՞լ է ձեզ լրացուցիչ հայտնություն ստանալ: Ջոզեֆի դեպքում այն օգնեց: Կարճ ժամանակ անց այն բանից հետո, երբ ոգեշնչված թարգմանությունից Ջոզեֆն իմացավ Ենովքի և Սիոնը հիմնադրած նրա ժողովրդի մասին (տես Մովսես 7.18–21) Տերը ցուցումներ տվեց Ջոզեֆին՝ օգնելու Սրբերին դառնալ Սիոնի ժողովուրդ (տես Վարդապետություն և Ուխտեր 38, 42, 45):

Մեկ այլ օրինակ տեղի ունեցավ, երբ Ջոզեֆ Սմիթը և Սիդնի Ռիգդոնը թարգմանում էին Հովհաննես 5.29 հատվածը: Նրանք հարցեր ունեին դրախտի և դժոխքի մասին, որոնք հանգեցրին մի կարևոր տեսիլքի, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 76 գլխում: Այդ տեսիլքը ներառում էր ճշմարտություններ փառքի երեք աստիճանների մասին, որոնք մարդիկ կարող են ժառանգել այս կյանքից հետո:

Կարդացե՛ք Վարդապետություն և Ուխտեր 76.22–24, 50–53 և 58–62 հատվածները և նշե՛ք, թե ինչ եք սովորում Հիսուս Քրիստոսի մասին և ինչպես կարող ենք վերադառնալ Նրա և Երկնային Հոր հետ ապրելու:

- Ի՞նչ բառեր կամ արտահայտություններ նշեցի՛ք: Ինչո՞ւ:
- Ինչո՞ւ մարդը կարող է երախտապարտ լինել այս ճշմարտությունները իմանալու համար:

## Ջոզեֆ Սմիթի թարգմանության միջոցով Տերը տվեց վարդապետական հստակություն և լրացուցիչ գաղափարներ Աստվածաշնչի հատվածների վերաբերյալ:

Բացի Թանկագին Մարգարիտից, գիտե՞ք, թե որտեղ կարելի է գտնել Աստվածաշնչի՝ Ջոզեֆ Սմիթի թարգմանությունները: Դրանցից շատերը գտնվում են Աստվածաշնչի՝ Ջոզեֆ Սմիթի թարգմանության ընտրանիում՝ սուրբ գրությունների

հետևի հատվածում կամ Ջոզեֆ Սմիթի թարգմանության հատվածում, որը գտնվում է Gospel Library հավելվածի «Ուսումնասիրության օժանդակ նյութեր» բաժնում: Իմացեք, թե ինչպես օգտագործել այս նյութերը՝ ուսումնասիրելով ստորև բերված օրինակը և բացատրությունը:

## ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՋՈՋԵՖ ՍՄԻԹԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆԻ

Հետևյալն ընտիր հատվածներ են Աստվածաշնչի՝ Հակոբ Թագավորի Տարբերակի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից (ՋՍԹ): Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ վերականգնի Աստվածաշնչյան ձեռագրի ճշմարտությունները, որոնք կորել կամ փոփոխվել էին քնագրի ձեռագրերը գրելուց հետո: Այդ վերականգնված ճշմարտությունները պարզեցնում են վարդապետությունը, և զարգացնում սուրբ գրքերի ըմբռնումը: Հատվածները, որոնք ընտրվել են Ուղեցույցի համար, կօգնեն ձեզ զարգացնել սուրբ գրքերի ըմբռնումը, անկախ այն բանից, թե որ լեզվով է թարգմանված:

Քանի որ Տերը Ջոզեֆին հայտնել է որոշակի ճշմարտություններ, որոնք մի ժամանակ գրել էին քնագրի հեղինակները, Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը նման չէ աշխարհում գոյություն ունեցող Աստվածաշնչյան որևէ այլ թարգմանության: Այդ իմաստով, *թարգմանություն* բառն օգտագործվում է սովորականից ավելի լայն և տարբեր իմաստով, քանզի Ջոզեֆի թարգմանությունն ավելի շատ հայտնություն էր, քան բառացի թարգմանություն մի լեզվից մյուսը: ՋՍԹ-ի մասին լրացուցիչ տեղեկությունները համար, տես «Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն (ՋՍԹ)» բառահոդվածը՝ ուղեցույցի այբբենական կարգով թվարկված քեմաներում:

Հետևյալ լրատվանումը ցույց է տալիս ՋՍԹ-ի ընտրանիի մի օրինակ.

Թավ տանելով այս հղումը Հակոբ Թագավորի Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից է: Քանի որ նրա թարգմանությունն Աստվածաշնչի տեքստում բառեր է վերականգնել, հատվածների թվերը կարող են տարբերվել այն հրատարակությունից, որը դուք օգտագործում եք:

**ՋՍԹ, Մատթեոս 4.1, 5–6, 8–9**  
(համեմատիր Մատթեոս Գ.1, 5–6, 8–9. նմանատիպ փոփոխություններ են կատարվել Գուկաս Գ.2, 5–11-ում)

(Հիսուսը տարվեց Հոգու կողմից, այլ ոչ Սատանայի):

1 Այն ժամանակ Հիսուսը Հոգու կողմից տարվեց անապատ, որ Աստծո հետ լինի:

5 Այն ժամանակ Հիսուսը տարվեց սուրբ քաղաք, և Հոգին կանգնեցրեց նրան տաճարի աշտարակի վրա:

6 Ապա դեռ եկավ նրա մոտ և ասաց. Եթե դու Աստծո Որդին ես, ցած գցիր քեզ. որովհետև գրված է՝ Իր հրեշտակներին կիրամայի քեզ համար. և իրենց ձեռքերի վրա կբարձրացնեն քեզ, որ չլինի քե երբևէ ոտդ քարին դիպչի:

8 Եվ դարձյալ, Հիսուսը Հոգուն էր, և այն բարձրացրեց նրան շատ բարձր մի սար, և նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը:

9 Եվ դեռ կրկին եկավ նրա մոտ և ասաց. Այս բոլորը ես կտամ քեզ, եթե ընկնես ու երկրպագես ինձ:

Փակագծերում ձեր Աստվածաշնչի հղումն է, որի հետ դուք պետք է համեմատեք Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը:

Այս հաղորդագրությունը բացատրում է, թե ինչ վարդապետություն է պարզաբանել Ջոզեֆ Սմիթն իր թարգմանությանը:

Սա տեքստն է, ինչպես որ Ջոզեֆ Սմիթը թարգմանել է այն:

Որոշ լեզուներով Ջոզեֆ Սմիթի թարգմանության հատվածները կարելի է գտնել Աստվածաշնչի՝ Վերջին Օրերի Սրբերի հրատարակության Էջատակերի ծանոթագրություններում կամ թվային սարքերում «Անչլիդ բովանդակություն» բաժնում:

Կարդացեք Աստվածաշնչի հետևյալ հատվածները, ապա օգտագործեք Ջոզեֆ Սմիթի թարգմանությունը՝ ներշնչված փոփոխությունները բացահայտելու համար:

Հովհաննես 1.16–18 (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 1.16–19)

Հովհաննես 4.24 (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 4.26)

Հովհաննես 6.44, (Ջոզեֆ Սմիթի թարգմանություն, Հովհաննես 6.44)

- Այդ ոգեշնչված փոփոխություններն ի՞նչ են ուսուցանում ձեզ Հիսուս Քրիստոսի մասին
- Ինչո՞ւ է օրհնություն այս բաներն ավելի լավ հասկանալու: